

Կան կը գտնուեի՞մ՝ մինչդեռ միասին համախոհ էինք Լօզան երթալուս վրայ :

«Մեծաւորը այսպէս ուզեց՝ Կանը ա՛լ աւելի կաթոլիկ գտնելով, (բայց այդ ինծի հարցուցէք) . եւ ես չընդդիմացայ բոլորովին այն վախճանի ժամանակներուն՝ տեղի չտալու համար զժկամակուլութիւններու, որոնց մէջ երազներուս պայթումը կարծես կրկնուած բիրերով կը սաստէր կամ շտտուլիւնս :

«Արդ՝ հոս հանդիստ եմ, վը յաճարեմ գըրականութեան եւ իմաստասիրական ճիւղերուն, եւ կը գտնեմ դարգացման գրեթէ ամէն սրայման : Վարժապետներս կը համակրին զիս՝ կարծեմ հայ ըլլալուս պատճառաւ : Քարաքիս կեանքը բաւական սուղ է, բայց Մեծաւորը իր ուղարկումներուն մէջ գոհացուցիչ կը հանդիսանայ : Եթէ մեծ վիշա մ'ունիմ հոս հայութիւն չըլլալն է : Այս մասին մտառուզումի մէջ եմ, եկող տարի ապահով եմ որ ճար մը պիտի գտնամ :

«Ձեզ կ'ուղարկեմ նմուշ մը «Մարտունեք»էն . ընդունեցէք այդ փոքրիկ նուէրս, որ շնորհակալութիւններուս մէջ փոքր բարակումն է միայն : Այդ հատորիկը շեղաւ՝ ինչ որ պէտք էր ըլլալ . բայց այդ մասին ալ ջեմ մտածեր, եւ ոչ ալ անոր վերաբերեալ՝ փափաքներուս վիթամ զիսկը պիտի օրօրել ուզեմ : Ամէն պարագային դարձեալ ես Ձեզ երախտապարտ եմ :

«Մարդիկով Ձեզ քաջողջութիւն եւ յաջողութիւն Ձեր ձեռնարկներուն մէջ կը մնամ :

Սիրալիր ողջոյններով

Ձերդ՝
ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆ»

Երեք տարի վերջը 13 փետր. 1909-ին միեւնոյն Կան քաղաքէն Վարուժան ինձ կը գրէր .

«Սիրելի Հայր Ս . Երեմ ,

«Գեղեցիկ քարտերնիդ ընդունեցայ, եւ իբրեւ նոր դարձ մը՝ գեատեղեցի պեղարուեստական Արգօմիս մէջ : Լուրը մոռնալ չէ միշտ :

«Հին քարեկամները շատ բան չեն ունենար իրարու ըսելու : Ծնորհակալ եմ Ձեր խրատուսիչ տողերուն . ես միշտ վստահ եղած եմ Ձեր համակրութեան վրայ, որ ինծի համար թանկագին է : «Դաշինք»ի նկատմամբ Ձեր յայտ-

նած փափաքը կը ջանամ կատարել հազիւ թէ առիթը ներկայանայ : Արդեօք ի՞նչ կուսակցական ուղղութիւն պիտի ունենայ այդ թերթը :

«Կեանքը կը մօտենայ, եւ մօտ եմ իմ ուժերուս հետ առանձին մնալու : Լոկ գրականութեամբ չկրնալ ապրիլը ինծի խոր տրտմութիւն կը պատճառէ :

«Արդեօք ո՞ւր կը գրէք եւ ինչ ծածկանունան տալ, եթէ գիտնամ զայդ աւելի հոգեւին կը հետապնդեմ Ձեր գողար գրիչը :

«Ընդունեցէք կարօտագին յարգանքներս

Ձերդ՝

ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆ

* * *

Բոլորած էին չորս տարիներ : Ես վերադարձած էի Մուրառ-Ռափայէշեան վարժարան, ուր Վարուժան զիս կուզար կը գտնէր, եւ համարաբանէն տաացած ախրումը անհուն հրճուանքով ինծի ցոյց կուտար : Ուրախ էր իր յայթիանակին . նպատակին հասած էր :

Հայրենիք կը վերադառնար : Ոտքերը յողնած պանդուխտ Վարուժան գաւակը՝ կը լսէր մօրը ձայնը . «Եկ՛ւր, որդեա՛կ, հայրենի տունըդ չէնցուր» :

Կ'երթար ան իր հօր տունը եւ իր հայրենիքի գաւակներուն մտքի չէնքը չէնցունելու :

Օտանեան Սահմանադրութեան խանդավառ չըջանին 1909-ին Վարուժան կը հրատարակէր «Յեղին Սիրտը» եւ գայն գեղեցիկ նուիրականով մը ինծի կը նուիրէր : Այդ գրքին վերայ իմ գրած գրախօսականիս առթիւ, ի՞նչ կը ստանայի հետեւեալ նամակը .—

«Սիրելի Հայր,

Հ . Սիմ . վրդ . Երեմեան

«Դաշինք»ի մէջ Յեղին Սիրտին մասին Ձեր ըրած գրախօսականով՝ վերջապէս անգամ մըն ալ եկաք ապացոյցը տալու բարեկամական Ձեր ոսկի սրտին եւ սրամանդեայ զգացումներուն : Ծնորհակալ եմ Ձերմարտին : Ի՞նչ մեծ բերկրանք ինծի համար երբ դործս գնահատուեցաւ Ձեր գրչէն ու վրձնէն : Մանաւանդ այդ առիթով՝ Ձեր արթնցուցած Ազդույի յիշատակներս մեր կերած ողկոյններուն պէս սիրտս ճմլեցին, եւ անգամ մըն ալ պեղարուեստական այդ վայրերուն հայրենախօսը բորբոքեցին մէջս : Սվաղ բնութիւնը ցամաք է, կեանքը տխուր, եւ ես